ՎԱՐԴԱՀՈՎԻՏ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սամվել Գևորգյան
Հեռախոս՝ +374. 094.024430

Վարդահովիտ գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, մարզկենտրոնից 34 կմ հեռավորության, իսկ ծովի մակերևույթից՝ 2050 մ բարձրության վրա: Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղական համայնքների ցանկում:

Համայնքում 1989 թվականից բնակվում են փախստական և մարզի տարբեր գյուղերից երիտասարդ ընտանիքներ, ովքեր իրենց նախկին բնակավայրերում հնարավորություն չեն ունեցել բնակարան կառուցելու, ապրելու, տեղափոխվել և բնակություն են հաստատել Վարդահովիտ գյուղական համայնքում: Վարդահովիտ է վերանվանվել 1991 թվականի ապրիլի 3-ին:

Գյուղում կան 13-16 դդ. խաչքարեր:

Բնակիչները, ելնելով բնակլիմայական պայմաններից, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ:
Գյուղն ունի հիմնական դպրոց, մշակույթի տուն, վարչական շենք, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Վարդահովիտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 11 հուշարձան: